# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՕԳՈՍՏՈՍԻ 2026թվականի N 108-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 11-Ը ՕԳՈՍՏՈՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 14 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Արենի համայնքի ավագանու 11-ը օգոստոսի 2026 թվականի թիվ 14 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 11.08.2026 թվականի թիվ 14 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2027 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրային նախնական հայտերին համաձայնություն տալու մասին:

3. Արենի համայնքի ավագանու 12 մարտի 2026 թվականի թիվ 033-Ա որոշման հավելվածում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

4. Արենի համայնքում 2026թվականին կազմակերպվող փառատոնների և գյուղի տոների իրականացման աշխատանքների և գումարների հատկացման մասին:

5.Արենի համայնքի ավագանու 16.01.2026թվականի թիվ 002-Ն որոշմամբ հաստատված 2026թվականի տարեկան բյուջեում հոդվածային վերաբաշխումներ կատարելու մասին:

6. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող, Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող հողամասերը օտարելու մասին:

7. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0,02841հա գյուղատնտեսական նշանակության հողմասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

8. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերից մրցույթով վարձակալությամբ հատկացնելու մասին:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՕԳՈՍՏՈՍԻ 2026թվականի N 109-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2027 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՅՏԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի և ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տարամադրման կարգը հաստատելու մասին» N 1708-Ն որոշման պահանջներով,

Արենի համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2027 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրային նախնական հայտերին՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված
Արենի համայնքի ավագանու 11.08.2026թ.
թիվ 109-Ա որոշման

## Ցանկ

Արենի համայնքում 2027թ. իրականացվելիք սուբվենցիոն ծրագրերի

| | ոլորտ | Ծրագրի անվանում | համայնք % | Կառավարություն% |
|---|---|---|---|---|
| 1 | Խմելու ջրի ջրամատակարարման, ինչպես նաև ջրահեռացման համակարգի կառուցում, | Արենի համայնքի Խաչիկ բնակավայրում խմելու ջրի ՕԿՋ-ի և ներքին ցանցի կառուցում, գոյություն ունեցող ՕԿՋ-ի վերանորոգում, ջրաչափական հանգույցների տեղադրում, Ռինդ բնակավայրում կոյուղու համակարգերի և մաքրման կայանների կառուցում | 30 | 70 |
| 2 | Ոռոգման համակարգի կառուցում, վերակառուցում, հիմնանորոգում | Արենի համայնքի Արենի բնակավայրի ,Չիվայի ձոր և թաղամասումմոտ 3.3կմ ոռոգման ջրատարի ներքին ցանցի կառուցում, Արենի բնակավայրում ,Ղռերե հանդամասում 1.3կմ ոռոգման ջարտարի ներքին ցանցի կառուցում, Ելփին բնակավայրում ,Ռազի առուեկոչվող ոռոգման ջրագծի 2կմ հատվածի հիմնանորոգում | 30 | 70 |
| | Ներհանայնքային /տեղական նշանակության/փողոցներ ի ու մայթերի կառուցում, վերակառուցում, հիմնանորոգում բնական | Արենի համայնքի Արփի և Չիվա բնակավայրերում գերեզմանատներ տանող ճանապարհների կառուցում | 30 | 70 |
| 3 | Զբոսայգիների ու պուրակների, մարզահրապարակների , մարզադաշտերի | Արենի համայնքի բնակավայրերում խաղահրապարակների կառուցում | 50 | 50 |
| 4 | մարզադաշտերի կառուցում և հիմնանորոգում, | Արենի համայնքի Ագարակաձոր, Արենի , Արփի, Չիվա և Աղավնաձոր բնակավայրերում ֆուտբոլի մարզադաշտերի կառուցում | 50 | 50 |
| | Փողոցային լուսավորության համակարգերի | Արենի համայնքի Արենի, Աղավնաձոր, Խաչիկ, Ռինդ բնակավայրերում փողոցային լուսավորման համակարգերի կառուցում | 35 | 65 |
| 5 | Նախադպրոցական հաստատությունների կառուցում, վերակառուցում, | Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի մանկապարտեզի հիմնանորոգում, սալվածքների կառուցում և համապատասխան գույքի և կահավորանքի ձեռքբերում | 35 | 65 |
| | Հասարակական շենքերի/ մշակույթի տուն, սպորտ դպրոց, և այլն/կառուցում, հիմնանորոգում, ինչպես նաև համապատասխան գույքի և կահավորանքի ձեռքբերում | Արենի համայնքի Ագարակաձոր, Արփի, Ելփին բնակավայրերում ներբնակավայրային ճանապարհների սպասարկման գոտիների հարակից տարածքներում հենապատերի կառուցում | 45 | 55 |

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Սիմոնյան

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ... 08914384 «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ» ... ԵՆ»

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՕԳՈՍՏՈՍԻ 2026թվականի N 110-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 12 ՄԱՐՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 033-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին որոշում է.

Արենի համայնքի ավագանու 12 մարտի 2026 թվականի «Արենի համայնքի ավագանու 05 դեկտեմբերի 2025 թվականի «2026 թվականի համար Արենիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 147-Ա որոշման հավելվածը նոր խմբագրությամբ շարադրելու մասին» թիվ 033-Ա որոշման հավելվածում կատարել լրացումներ և փոփոխություններ.

1. Հավելվածի քաղաքացիական աշխատանք իրականացնող անձնակազմ բաժնում՝

1) 83-րդ տողը շարադրել նոր խմբագրությամբ.

| հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | աշխատակիցների թվաքանակը | պաշտոնային դրույքաչափը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|
| 83 | Անասնաբույժ | 5 | 5 | 123000 | 615000 |

2) 84-րդ տողից հետո ավելացնել նոր 85-րդ տող հետևյալ բովանդակությամբ.

| հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | աշխատակիցների թվաքանակը | պաշտոնային դրույքաչափը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|
| 85 | Արփի և Գնիշիկ բնակավայրերի անասնաբույժ | 1 | 1 | 163000 | 163000 |

2. Քաղաքացիական աշխատանք իրականացնող անձնակազմ բաժնում՝ ընդամենը տողը շարադրել նոր խմբագրությամբ՝

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ընդամենը | 11 | 11 | 1776000 | 2268000 |

3) Աղյուսակի վերջին՝ ընդամենը տողը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ կերպ՝

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ընդամենը | 108 | 118 | 21251200 | 24368450 |

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՕԳՈՍՏՈՍԻ 2026թվականի N 111-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2026ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ՓԱՌԱՏՈՆՆԵՐԻ ԵՎ ԳՅՈՒՂԻ ՏՈՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-րդ և 42-րդ կետերի պահանջով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Արենի համայնքի բնակավայրերում (Արենի, Ագարակաձոր, Աղավնաձոր, Արփի, Գնիշիկ, Ելփին, Չիվա, Խաչիկ և Ռինդ ) 2026 թվականին կազմակերպվող փառատոնների և գյուղի տոների պատշաճ կազմակերպման և իրականացման համար 2026թվականի տարեկան բյուջեից հատկացնել գումարներ.

1) Արենի բնակավայր՝ մինչև 8 միլիոն ՀՀ դրամ,

2) Ագարակաձոր բնակավայր՝ մինչև 2 միլիոն ՀՀ դրամ,

3) Աղավնաձոր բնակավայր՝ մինչև 5 միլիոն ՀՀ դրամ,

4) Արփի բնակավայր՝ մինչև 2 միլիոն ՀՀ դրամ,

5) Գնիշիկ բնակավայր՝ մինչև 2 միլիոն ՀՀ դրամ,

6) Ելփին բնակավայր՝ մինչև 2 միլիոն ՀՀ դրամ,

7) Խաչիկ բնակավայր՝ մինչև 5 միլիոն ՀՀ դրամ,

8) Չիվա բնակավայր՝ մինչև 2 միլիոն ՀՀ դրամ,

9) Ռինդ բնակավայր՝ մինչև 5 միլիոն ՀՀ դրամ,

Ընդամենը՝ 33 միլիոն ՀՀ դրամ:

2. Արենի համայնքի ղեկավարին՝

1. Փառատոնների կազմակերպման աշխատանքներին և իրականացվելիք ծախսերին ներգրավել համայնքի կողմից հիմնադրված <<Արփա>> բնապահպանական հիմնադրամին և <<Արենի համայնքային զարգացման>> հիմնադրամին:

2. Փառատոնների ժամանակ (բացառությամբ Արենի գինու փառատոնի, որի ընթացքում վճարովի տաղավարների սակագինը սահմանվում է Արենի փառատոն հիմնադրամի հետ համատեղ) համայնքապետարանի կողմից քաղաքացիներին և իրավաբանական անձանց տրամադրվող գույքի (տաղավար, ծալովի աթոռ, ծալովի սեղան) վարձավճար սահմանել մեկ օրվա համար 10000 /տաս հազար/ ՀՀ դրամ, որը պետք է վճարվի «Արենի համայնքային զարգացման» հիմնադրամի հաշվեհամարին կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացման համար:

3. Փառատոնների և գյուղի տոների ժամանակ (բացառությամբ Արենի և Խաչիկ բնակավայրերի) բնակավայրերի բնակիչների կողմից ներկայացված տաղավարների անվանակարգերում մրցանակային տեղեր զբաղեցրած մասնակիցներին պարգևատրել դրամական գումարներով հետևյալ համամասնությամբ.

1) 1-ին տեղ -30000 ՀՀ դրամ,

2) 2-րդ տեղ - 25000 ՀՀ դրամ,

3) 3-րդ և մասնակից բոլոր մրցութային տաղավարները - 20000-ական ՀՀ դրամ:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՕԳՈՍՏՈՍԻ 2026թվականի N 112-Ն

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 16.01.2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 002-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՀՈԴՎԱԾԱՅԻՆ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով և «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, հիմք ընդունելով Արենի համայնքի ղեկավարի առաջարկությունը, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արենի համայնքի ավագանու 16-ը հունվարի 2026 թվականի թիվ 002-Ն որոշմամբ հաստատված 2026 թվականի տարեկան բյուջեում կատարվող հետևյալ փոփոխությունները և վերաբաշխումները՝

1. Պետական բյուջեից տրամադրող այլ ընթացիկ դոտացիաներ 37 բաժնի 09 խմբի 00 դասի եկամտատեսակում ավելացնել 282 771 ՀՀ դրամ և ուղղել կառավարման մարմնի պահպանում գործառնական դաակարգման 01 բաժնի 01 խմբի 01 դասի 4111 /աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ/հոդվածին,

2. Արենի այլ ոչ հարկային եկամուտներ 28 բաժնի 50 խմբի 00 դասի եկամտատեսակում ավելացնել 9 425 712 ՀՀ դրամ և ուղղել գյուղատնտեսություն 04 բաժնի 02 խմբի 01 դասի 4729/այլ նպաստներ բյուջեից /հոդվածին:

3. Կառավարման մարմնի պահպանում 01 բաժնի 01 խմբի 01 դասի 5122/վարչական սարքավորումներ/ հոդվածից պակասեցնել 2 500 000 ՀՀ դրամ և ուղղել ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում գործառնական դասակարգման 04 բաժնի 02 խմբի 04 դասի 5112 /շենքերի և շինությունների շինարարություն / հոդվածին:

4. Արենի համայնքի սոց. անապահով անձանց աջակցություն 10 բաժնի 07 խմբի 01 դասի 4269 /հատուկ նպատակային այլ նյութեր/ հոդվածից պակասեցնել 2 600 000 ՀՀ դրամ և ուղղել Արենիի համայնքապետարանի պահուստային ֆոնդ գործառնական դասակարգման 11 բաժնի 01 խմբի 02 դասի 4891 /պահուստային միջոցներ/ հոդվածին:

5. Արենի համայնքի 2026 թվականի տարեկան բյուջեի վարչական մասի ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ 11 բաժնի 01 խմբի 02 դասի գործառնական դասակարգման 4891 /պահուստային միջոցներ/ հոդվածից կատարել հատկացում ֆոնդային բյուջե՝ 2 600 000 ՀՀ դրամի չափով:

6. Ֆոնդային բյուջեում ավելացված 2 600 000 ՀՀ դրամն ուղղել ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում գործառնական դասակարգման 04 բաժնի 02 խմբի 04 դասի 5112 /շենքերի և շինությունների շինարարություն / հոդվածին:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՕԳՈՍՏՈՍԻ 2026թվականի N 113-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

1. Սույն որոշման հավելված 1-ով ներկայացված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը լիցենզավորված կազմակերպության կողմից գնահատել և էլեկտրոնային համակարգի միջոցով անցկացվող աճուրդ-վաճառքով օտարել:

2. Հողամասերի աճուրդի մեկնարկային գին սահմանել գնահատված արժեքի 100%-ը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված 1

Արենի համայնքի ավագանու 11.08.2026 թվականի
թիվ 113-Ա որոշման

| N | Գտնվելու վայրը և հասցեն | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Ծածկագիրը | Մակերեսը (հա) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Արենի համայնք, գ.Արենի | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 10-008-0002- | 0.05926 |
| 2 | Արենի համայնք, գ.Արենի | գյուղատնտեսական | այլ հողատեսք | 10-008-0184-0122 | 0.38 |

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Սիմոնյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՕԳՈՍՏՈՍԻ 2026թվականի N 114-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,02841ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին որոշում է

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0,02841հա գյուղատնտեսական նշանակության հողմասը (ծածկագիրը՝ 10-008-0178-0005-ից) ճանաչել համայնքային սեփականություն:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՕԳՈՍՏՈՍԻ 2026թվականի N 115-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին որոշում է.

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.07601հա հողամասը (ծածկագիրը՝ 10-008-0101-0226-ից, հողատեսքը՝ արոտավայր) մրցույթով, 25 տարի ժամկետով հատկացնել վարձակալությամբ: Տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել հողամասի անշարժ գույքի հարկի դրույքաչափից ոչ պակաս՝ 20000 (քսան հազար) ՀՀ դրամ:

2. Արենի համայնքի Գնիշիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.15311 հա հողամասը (ծածկագիրը՝ 10-017-0201-0002-ից, հողատեսքը՝ արոտավայր) մրցույթով, 25 տարի ժամկետով հատկացնել վարձակալությամբ: Տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել հողամասի անշարժ գույքի հարկի դրույքաչափից ոչ պակաս՝ 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**